#քոնարդիկամենուր

Ել. – ՀՓ 2275-2026
«03» Օգոստոս 2026թ.
ք. Երևան

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան 1)

Հարգելի՛ պարոն Ավանեսյան,

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Ձեզ եմ ներկայացնում «Փ. ՍԱՄՍԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին պարտադիր կատարման ցուցումը:

Խնդրում եմ օրենքով սահմանված կարգով ընթացք տալ:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Կատ.՝ Լիլիթ Օրդուխանյան
Գնումների իրականացման
բաժնի ղեկավար
Հեռ.՝ 095984281

«Հայփոստ» ՓԲԸ
ՀՀ, 0061, Երևան, Արշակունյաց 65/5
+374 10 514 514
info@haypost.am
www.haypost.am

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

31 «հուլիսի» 2026թ.

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-26/48-6	3	Կոշտ սկավառակ	2400000	«Փ. ՍԱՄՍԱՐ» ՍՊԸ	08274346	ք. Երևան, Պռոշյան 29 բն.	15.07.2026թ.	«Հայփոստ» ՓԲԸ	«Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Գնորդ) կողմից, Պայմանագրով Գնորդին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ Վաճառողի կողմից	Առկա չէ

									չեն պահպանվել Պայմանագրի հետևյալ դրույթները՝ 2.1.7 Գնորդը իրավասու է միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը, մասնավորապես՝ 2.1.7.1 կետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:	

(ստորագրություն)
Կ.Տ.

ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ